ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տվյալ կրթական ծրագրով ուսումնառելու ընթացքում դուք ձեռք կբերեք գլոբալ տնտեսական գործընթացների համակարգային վերլուծության հմտություններ, ձեռք կբերեք տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններ: Գործատուները գնահատում են հատկապես այն փաստը, որ մեր շրջանավարտները կարողանում են լուծել ոչ ստանդարտ խնդիրներ:

**Ծրագրի տևողությունը**
1.5 տարի

**Դասապրոցեսը**
շաբաթական 3 անգամ
ժամը 18:20-ից

**Ուսման վճարը (տարեկան)**
700.000 ՀՀ դրամ

**Որակավորում**
տնտեսագիտության մագիստրոս

# ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

**Կրթական ծրագիրը մշակվել է ՀՀ կենտրոնական բանկի մասնագետների, արտաքին ու ներքին փորձագետների կողմից և իրականացվում է ԵՄ Ժան Մոնե մոդուլ ծրագրի շրջանակներում: Կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները հնարավորություն ունեն կրկնակի դիպլոմ ստանալու Ռուսաստանի Ժողովուրդների բարեկամության համալսարանի «Միջազգային առևտուր» մասնագիտության գծով:**

## առաջին կիսամյակ

1. Գիտահետազոտական մեթոդաբանություն
2. Մասնագիտական օտար լեզու
3. Միջազգային մասնավոր իրավունք
4. Մակրոտնտեսագիտություն – 3
5. Տնտեսագիտական դիվանագիտություն
6. Միջազգային մրցունակության հիմնախնդիրներ

## երկրորդ կիսամյակ

1. Միջազգային ֆինանսական շուկաներ
2. Արժութային շուկաներ և արժութային քաղաքականություն
3. Միջազգային և վերազգային ինստիտուտներ
4. Վճարային հաշվեկշիռ և ներդրումային դիրք
5. Տվյալագիտություն
6. Արտաքին առևտրի քաղաքականություն

## երրորդ կիսամյակ

1. Գիտահետազոտական փորձառություն (տևողություն՝ 8 շաբաթ)
2. Մագիստրոսական թեզի պաշտպանություն



# ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

## Արա Ալյոշայի Մկրտչյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Կրթական ծրագրի ղեկավար

2022թ.-ից մինչ օրս՝ ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ: 2018-2022թթ.՝ ՀՊՏՀ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկանի տեղակալ: 2012-2014թթ.՝ ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության բանկերի վերահսկողության բաժնի վերահսկող: 2011թ.-ից մինչ օրս՝ դասավանդում է ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում:

## Դիանա Ռոբերտի Գալոյան

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

2019 - 2024 թթ.՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր: 2019 թ. ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 2017-2019 թթ.՝ ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ:

## Գրիգոր Արշամի Նազարյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2017 թվականից մինչ օրս՝ ՀՊՏՀ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան, 2012–2017 թթ.՝ ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ: 2012թ.՝ ՀՊՏՀ գիտության բաժնի պետ, 2010–2012 թթ.՝ՀՊՏՀ գիտության և որակի կառավարման վարչության պետ:

# ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

## Դավիթ Ներսիկի Հախվերդյան

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

2019 թվականից մինչ այժմ՝ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն, ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր: 2014-2019 թթ.՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ, Ֆինանսական վարչության պետի տեղակալ: 2013 թ.՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության փորձագետ: 2011թ.՝«ԷԿՕ ՓՅՈՒՐ» ՍՊԸ, զարգացման գծով գլխավոր տնօրեն:

## Զոյա Աղվանի Թադևոսյան

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1996 թվականից մինչ այժմ՝ ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր: 2007-2010 թթ.՝ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ:

# ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ



## Ալբերտ Արմենի Հայրապետյան

Տնտեսագիտության թեկնածու

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

2024 թվականից մինչ օրս ՀՀ էկոնոմիկայի նախարարության տնտեսական հետազոտությունների վարչության պետ: 2022-2024թթ.՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության վճարահաշվարկային համակարգերի բաժնի պետ: 2020-2022թթ.՝ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն, ավագ հետազոտող: 2018 թվականից մինչ այժմ՝ ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն, դասախոս: 2018-2020 թթ.՝ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ, տնօրենի խորհրդական: 2017 թ.՝ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ, առաջատար վերլուծաբան:

## Թադևոս Էդիկի Ավետիսյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2008-2017թթ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ, 2017 թվականին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի գլխավոր խորհրդական, 2017-2018թթ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, 2018–2021թթ.՝ «Հրայր Մարուխեան» հիմնադրամի ֆինանսավորմամբ գործող տնտեսական հետազոտությունների գրասենյակի համակարգող, 2019 թվականից մինչ այժմ՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ, 2021 թ. հուլիսի 22-ին ՀՀ ԱԺ պատգամավոր է ընտրվել «Հայաստան» դաշինքի ընտրական ցուցակով:

## ԳՈՐԾԸՆԿԵՐ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջանավարտները հնարավորություն են ստանում ղեկավար պաշտոններ զբաղեցնել վերազգային կորպորացիաներում («Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ, «HSBC Հայաստան» և այլն), միջազգային կազմակերպություններում (Եվրասիական տնտեսական հանձնաժողով, Առևտրի համաշխարհային կազմակերպություն Միավորված ազգերի կազմակերպություն, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն և այլ) և արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող ֆիրմաներում («Տաշիր Ինվեստ Գրուպ» ՓԲԸ, Երևանի կոնյակի գործարան, «Դիջիթեյն» և այլն): Նմանատիպ կազմակերպություններում միջին աշխատավարձը կազմում է 1.5 մլն – 2 մլն ՀՀ դրամ:

Բացի դրանից, շրջանավարտները մասնագիտական աճի հրաշալի հնարավորություն են ստանում Հայաստանի պետական կառավարման համակարգում, հատկապես՝ ՀՀ կենտրոնական բանկում, ՀՀ Կառավարությունում, ՀՀ նախագահի և վարչապետի աշխատակազմերում, ՀՀ Կառավարության կառուցվածքում ընդգրկված նախարարություններում, խորհուրդներում ու միջկառավարական հանձնաժողովներում:

**Պետական ոլորտի ղեկավար հաստիքներում միջին աշխատավարձը կազմում է** 500 **հազար** – 1 **մլն ՀՀ դրամ**:

**Ողջույն**, **ես Համլետն եմ:** Ավարտել եմ ՀՊՏՀ ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի առկա բակալավրիատը, այնուհետև նույն մասնագիտության մագիստրատուրան: Ուսումնառության ընթացքում ձեռք բերած տեսական ու գործնական գիտելիքներս և հմտություններս այսօր վստահաբար կիրառում եմ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում:

Ներկայումս ՀՀ էկոնոմիկայի նախարարության գիտալիքահենք տնտեսության վարչության պետ: 2021-2022թթ.՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն**, ինչպես նաև «Հորիզոն Եվրոպա» ծրագրի ազգային կոնտակտային անձն եմ և մասնակցում ու համակարգում եմ Նորարարության և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտի (EIT) կողմից իրականացվող դրամաշնորհային ծրագրերը: Ցանկանում եմ նշել, որ իմ անցած բոլոր կրթական ծրագրերը շատ արդիական են և ունեն մեծ պահանջարկ ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան աշխատաշուկայում:

ՄՏՀ ամբիոնի ամենակարևոր առավելությունը համարում եմ այն, որ դասախոսները պրոֆեսիոնալ մասնագետներ են, որոնք ջանք չեն խնայում իրենց հմտությունները ուսանողներին փոխանցելու հարցում:

ՀՊՏՀ-ում, ի դեմս ՄՏՀ ամբիոնի, ես գտել եմ մի մեծ ընտանիք, որտեղ բոլորը սիրում և հարգում են միմյանց և իմ, արդեն հարազատ դարձած բուհում, ես զգում եմ ինձ ինչպես իմ սեփական ընտանիքում:

## շրջանավարտներ

**Ողջույն**, **ես Մերին եմ:** Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտացման առկա բակալավրիատը, այնուհետև՝ նույն մասնագիտության մագիստրատուրան:

Մագիստրատուրայում սովորելու ընթացքում Erasmus + միջազգային փոխանակման ծրագրի շրջանակներում սովորել եմ նաև Լեհաստանում Պոզնանի Տնտեսագիտության և բիզնեսի համալսարանի միջազգային բիզնեսի ֆակուլտետում՝ ուսումնասիրելով նաև միջազգային փորձն ու պրակտիկան: Մագիստրատուրայի կրթությունս առավելապես կենտրոնացված էր միջազգային ասպարեզում արտաքին առևտրային հարաբերությունների կարգավորման, փոխգործակցության հիմնարար մոտեցումների և սկզբունքների վրա, որոնց կարևորությունն ու արդիականությունը մեր օրերում անհերքելի են:

Այս տարիների ստացած հիմնարար գիտելիքների և ունակությունների զարգացման շնորհիվ այսօր աշխատում եմ **ՀՀ վարչապետի աշխատակազմի Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնում՝ որպես Տնտեսական հետազոտությունների ծառայության ղեկավար**, համագործակցում եմ տեղական և միջազգային հետազոտական-վերլուծական կենտրոնների հետ: